ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 23-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովը, որը նվիրված էր ակադեմիայի 1972 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների քննարկմանը։

Ժողովը ներածական խոսքով բաց արեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

1972 թ. Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեությունն ընթացել է ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումների իրականացման նշանաբանով,— ասաց նա։ —Մեր գիտնականները աշխատել են ոգեշնչված, մեծ բեռնվածությամբ. զարգացնելով ֆունդամենտալ գիտությունները, նրանք ավելի մեծ ուշադրություն են նվիրել իրենց հետազոտությունների արդյունքները ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու հարցերին։ Նոր, հետաքրքրական և արժեքավոր հետազոտություններ են կատարվել ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական և հասարակական գիտությունների բոլոր բնագավառներում։

Այնուհետև պրեզիդենտը անդրադարձավ հանրապետության գիտնականների նվաճումներին։

ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի տարում մեծ, բեղմնավոր աշխատանք են կատարել հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտները։ Նրանք ստեղծել են մի շարք աշխատություններ, որոնցում բացահայտվում են սովետական ժողովուրդների բարեկամության, համագործակցության և փոխօգնության, նրանց մշակույթների փոխազդեցության հիմունքները։ Արժեքավոր հետազոտություններ են կատարվել էկոնոմիկայի, հայագիտության, փիլիսոփայության, հնագիտության ասպարեզում։

Վ. Համբարձումյանը նշեց, որ հնգամյակի վճռական տարում գիտնականները պետք է իրենց հետազոտությունները բարձրացնեն որակապես նոր մակարդակի, էլ ավելի մեծ ուշադրություն դարձնեն ժողովրդական տնտեսության զարգացման կենսական հարցերին։ Անհրաժեշտ է միավորել գիտական կոլեկտիվների ջանքերը խոշոր թեմաների մշակման համար, անընդհատ կատարելագործել գիտական աշխատանքի կազմակերպումը, ավելի լայնորեն արմատավորել նոր տեխնիկան։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով ժողովում հանդես եկավ ակադեմիայի նախագահության գլխավոր գիտնական քարտուղար, հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Բակունցը։ Նա հաղորդեց, որ հաշվետու ժամանակաշրջանում հանրապետության գիտական մտքի առաջատար կենտրոնի 32 հիմնարկներում մշակվել է 121 պրոբլեմ։ Ակադեմիայի ինստիտուտները և լաբորատորիաները արդյունաբերական ձեռնարկությունների ճյուղային գիտական հիմնարկների, կազմակերպությունների և գերատեսչությունների հետ կնքված տնտեսական պայմանագրերի հիման վրա կատարել են 65 աշխատանք՝ մոտավորապես 2,5 միլիոն ռուբլի ընդհանուր դումարով։

Զեկուցման մեջ մանրամասնորեն վերլուծվեց ակադեմիայի նախագահության, նրա բաժանմունքների, գիտական խորհուրդների և հանձնաժողովների գործունեությունը։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ալիխանյանը, Ա. Առաքելյանը, Ա. Ղարիբյանը, Հ. Մաղաքյանը, Ա. Նալբանդյանը, Մ. Զայլախյանը։

Այնուհետև «Բույսերի սիստեմավորման ներկան և ապագան» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Ա. Թախտաջյանը։

Տարեկան ժողովում հանձնվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի սահմանած պարգևները։

Գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար «Մեծարման գիր» ստացան հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Թախտաջյանը և Բ. Մարգարյանը։

Բազմամյա բեղմնավոր գիտական գործունեության համար «Վաստակագիր» ստացան Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ղարիբյանը, Ա. Նազարովը, Ա. Բարայանը, բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Ստեփանյանը։

Ակադեմիայի հիմնարկների 26 աշխատակիցներ պարգևատրվեցին «Գովեստագրով»՝ 1971—1972 թթ. կատարած գիտահետազոտա-

կան հաջող աշխատանքի և պրակտիկայում դրա արդյունքների ներդրման համար։

Ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին ներկա էին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Գ. Արզումանյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը, Հայաստանի կոմկուսի Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը։

ԳԱ գիտությունների բաժանմունքների ժողովներում, որոնք տեղի ունեցան մարտի 19—21-ը, քննարկվեցին 1972 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները և լսվեցին գիտական զեկուցումներ։

Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

1973 թ. հունվարի 29-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված հայ մշակույթի մեծ երախտավոր, արվեստի վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանի ծննդյան 100-ամյակին։

Նստաշրջանը բացեց Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստր Ռ. Գարսամյանը։ Նա բնորոշեց Լևոնյանին իբրև մի ականավոր դեմքի, որը նշանակալից ավանդ է ներդրել հայ մշակույթի տարբեր մարզերում՝ մամուլի պատմություն, հայ աշուղների կյանքին ու ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրություններ, թատերագիտություն, տպագրության պատմություն, արվեստագիտություն, ճարտարապետություն։

Նստաշրջանում լսվեց Լևոնյանի գիտական ժառանգությանը նվիրված երեք զեկուցում։

Բանասիրական գիտությունների թեկնածու Մուշեղ Նարյանի զեկուցումը նվիրված էր Լևոնյանի երախայրիքին՝ «Հայ աշուղներ» գրքին, որը լույս է տեսել 1892 թ. Ալեքսանդրապոլում, երբ Լևոնյանը հազիվ քսան տարեկան էր։ Առաջին գրքին հաջորդեցին իր հորը՝ Ջիվանուն, Բաղդասար Դպիրին, Գևորգ Ախվերդյանին, Սայաթ-Նովային, Նազանուն, Շերամին նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները, որոնք նորություն էին մեր իրականության մեջ։ Ղևոնդ Ալիշանը ժամանակին գրվատանքի խոսք ասաց այդ գրքի առթիվ։

Արվեստաբանության թեկնածու Ստեփան Թոփչյանի զեկուցման թեման էր Գարեգին Լևոնյանի գեղագիտական հայացքների քննությունը։ Զեկուցողն ընդգծեց, որ Գ. Լևոնյանը հայ իրականության մեջ առաջիններից էր, որ հետևողականորեն, տարիներ շարունակ իր խմբագրությամբ հրատարակված «Գեղարվեստ» տարեգրքում հրահրում, տարածում և հաստատում էր գեղագիտական գաղափարներ։ Նրա ժառանգության արժեքն այս առումով աներկրայելի է հայ էսթետիկայի պատմության մեջ, և մենք չենք կարող արժանին չհատուցել գիտնականին։

Արվեստաբանության թեկնածու Մանյա Ղազարյանը անդրադարձավ «Գարեգին Լևոնյանը և կերպարվեստի հարցերը» նյութին։

Ստեղծագործական կյանքի առաջին իսկ տարիներից արվեստաբանությունը դարձավ Լևոնյանի կյանքի նպատակը, զբաղմունքի կարևորագույն առարկաներից մեկը։

«Գեղարվեստ» տարեգիրքը կոչված էր ծառայելու ժողովրդի գեղագիտական դաստիարակությանը, հայ և օտար նկարիչների ստեղծագործությունների պրոպագանդմանը, հայ մշակույթի բազմակողմանի ուսումնասիրությանը։ Լևոնյանը ձեռնարկեց հայկական կիրառական արվեստի պատմության ամբողջական ուսումնասիրությունը, որի մեջ մտնում էին խեցեգործությունը, գորգագործությունը, փայտի գեղարվեստական փորագրությունը, զարդեր, տարազ և այլն։

Լևոնյանի հետաքրքրությունները չէին սահմանափակվում միայն հայ արվեստի խնդիրներով. նրա ուշադրության կենտրոնում էին նաև մյուս ժողովուրդների կերպարվեստի պատմությանն առնչվող հարցերը։ Լևոնյանը կազմեց էջմիածնի տաճարի նկարների համեմատական ցուցակը և գրեց այդ շրջանի արվեստի պատմության սեղմ շարադրանքը՝ «Հովնաթանյան եղբայրները հայ նկարչության պատմության մեջ», որը 1938 թ. Հայաստանում տպագրվելուց հետո թարգմանվեց նաև ռուսերեն։ 1946 թ. հրատարակեց «Հայ գիրքը և տպագրության արվեստը» արժեքավոր աշխատությունը։

Մարտիրոս Սարյանը Գարեգին Լևոնյանի մասին գրել է.

«Նրա կյանքի նպատակն էր՝ ժողովրդի մեջ սեր առաջացնել դեպի արվեստը, մարդկանց մոտ զարգացնել գեղագիտական ճաշակ... Նա երազում էր՝ տեսնել բարձր զարգացում ունեցող արվեստաբանական քննադատություն, ձգտում էր երիտասարդ սերնդի մեջ սեր առաջացնել դեպի արվեստաբանությունը... Մինչև այժմ իմ հոգում պահպանվում է այդ բացարձակապես բարի, ազնիվ և անկեղծ, խորապես կիրթ և ինտելիգենտ մարդու կերպարը»։

Մ. ՆԱՋԱՐԵԹՅԱՆ